

ՀՏԴ 37

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱԳԱ ԴԱՍՎԱՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՁևԱՎՈՐՈՒՄԸ «ՈՒՍՈՒՑՉԻ
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
Միքայելյան Լ. Ա.

Հոդվածում ներկայացվում է ապագա դասվարի հաղորդակցման մշակույթի և միջանձնային կոմպետենցիաների ձևավորման գործում «Ուսուցչի հաղորդակցման մշակույթը» դասընթացի դերը, դասընթացի ծրագիրը, թեմաների դասավանդման մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները:

Բանալի բառեր. հաղորդակցման մշակույթ, հաղորդակցական կարողություններ, միջանձնային կոմպետենցիաների ձևավորում, մանկավարժություն, դասընթացի բովանդակություն, կրթական ծրագիր, նպատակ, խնդիր, մեթոդներ:

ՇՊՀ-ի նախորդ տարիների ուսումնական պլաններն ուսումնասիրելիս նկատեցինք, որ ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի և միջանձնային կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասընթացներ, ուսումնական առարկաներ չեն ուսումնասիրվել: Գործող ուսուցիչների հետ անցկացրած հարցումներից պարզ դարձավ, որ նրանք ևս կարիք ունեն հաղորդակցման մշակույթի և միջանձնային կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված ծրագրով վերապատրաստման: Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնի կողմից մշակված «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում» մեթոդական ուղեցույցում ներկայացվում են կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի նախագծման և մշակման մեթոդաբանական մոտեցումները: Ներկայացվում են մեխանիզմներ ծրագրի կառուցվածքը որոշելու, համապատասխան կոմպետենցիաները սահմանելու, ուսումնառության

և ձևավորման մեթոդների ընտրության և ծրագրերի որակի բարելավման համար: Կրթական վերջնարդյունքների ցանկի որոշումը սերտորեն շաղկապված է կրթական ծրագրով տրվող որակավորման պրոֆիլի ծրագրի նպատակների և խնդիրների հետ [4, էջ 21]: Հիմք ընդունելով բուհերի կրթական ծրագրերին ներկայացվող պահանջները՝ մենք «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի բակալավրի կրթական աստիճանում սովորողների հաղորդակցման մշակույթի և միջանձնային կոմպետենցիաների ձևավորման պահանջը իրականացնելու համար մշակել ենք «Ուսուցչի հաղորդակցման մշակույթը» դասընթացի ծրագիրը:

Ուսանողներից շատերը բուհի կրթամշակութային միջավայրին հարմարվելու և մոտիվացիայի կարիք ունեն: Այդ իսկ պատճառով պահանջվում է ոչ միայն նրանց կրթական միջավայր ներգրավելու համար հնարների կիրառում, այլև ուսանողների մեջ հաղորդակցման մոտիվացիայի ձևավորում, հաղորդակցման ընդունակությունների զարգացում և դրա հիման վրա հաղորդակցական կարողությունների ձևավորում, որը հիմք կդառնա նրանց հաղորդակցման մշակույթի ձևավորման համար: Մանկավարժական գիտելիքների յուրացումը բավական չէ կոմպետենտ մանկավարժ դառնալու համար, և որ ուսուցչի գործունեության հաջողությունը և մանկավարժական վարպետությունը, հաղորդակցման մշակույթին տիրապետելը առաջին հերթին պայմանավորված են միջանձնային կոմպետենցիաների ոլորտում՝ քննադատության և ինքնաքննադատության, թիմային աշխատանքի, միջանձնային հարաբերությունների, միջոցիսցիպլինար թիմում աշխատելու, այլ ոլորտների մասնագետների հետ շփվելու, բազմաձևության և բազմամշակութայնության ընդունման, միջազգային միջավայրում աշխատելու, բարոյական արժեքների դավանելու կոմպետենցիաների տիրապետմամբ [4, էջ 18]: Հաղորդակցման մշակույթի կառուցվածքային բաղադրիչներից են հաղորդակցական կարողությունները, խոսքի մշակույթը, մանկավարժական գործողությունների մշակույթը, վարքագծի մշակույթը [5]:

Ըստ Ա. Պ. Պանֆիլովայի՝ ուսանողների հաղորդակցման կոմպետենտության ձևավորման համար անհրաժեշտ է. «Հատուկ կանոնների և հաղորդակցման նորմերի, արդյունավետ հաղորդակցման տեխնիկայի և տեխնոլոգիայի կառուցողական ոճի յուրացում, բարոյական ճիշտ որոշումների ընդունում, փոխըմբռնում – սա է

հաղորդակցական կոմպետենտության հիմնական տարրերի ոչ լրիվ ցանկը... » [8., էջ 150]:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության բովանդակությունը ներառում է մասնագիտական-անձնային, մասնագիտական գործունեության կարողությունները և մասնագիտական-ստեղծագործական որակները [9] :

Ապագա դասվարի հաղորդակցման կոմպետենցիաներին տիրապետելու աստիճանից է կախված նրանց հետագա մասնագիտական գործունեության հաջողությունը, որպեսզի ուսանողը բուհն ավարտելուց հետո աշխատանքային գործունեության մեջ ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում պրոբլեմային, կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման գործում տեսականորեն և գործնականորեն դառնա կոմպետենտ [1]:

Առաջարկում ենք «Ուսուցչի հաղորդակցման մշակույթը» դասընթացի ուսումնասիրումը, որն ուղղված է ապագա դասվարի հաղորդակցման մշակույթի էության մասին գիտելիքների խորացմանն ու ընդլայնմանը: Տեսական գիտելիքների յուրացման հիմնական նպատակը կրտսեր դպրոցականների շփման ձևերի, հաղորդակցման մշակույթի զարգացման հոգեբանամանկավարժական օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների համակարգի ձևավորումն է: Դասընթացը պարունակում է նաև գիտելիքներ հաղորդակցման մշակույթի յուրահատկությունների, կառուցվածքի, մանկավարժական պայմանների մասին, որոնք ապահովում են կրտսեր դպրոցականների հոգեկան այդ որակի հաջող զարգացումը: Այդ դասընթացի հիմնական ձևերն են դասախոսությունները, սեմինարները, գործնական և լաբորատոր պարապմունքները: Ուսանողների ինքնուրույն աշխատանքը ընթանում է դասախոսի ղեկավարությամբ՝ ուղղված հաղորդումների պատրաստմանը, նաև զեկուցումների, անհատական աշխատանքների, հետազոտական աշխատանքների կատարմանը: Ներկայացնում ենք «Ուսուցչի հաղորդակցման մշակույթը» **դասընթացի ծրագիրը, որի նպատակն է** ուսուցչի մասնագիտական պատրաստության համակարգում ձևավորել հաղորդակցման մշակույթ՝ կապված կրթության նոր մեթոդաբանության և հարացույցի հետ: Դա պայմանավորված է նրանով, որ անձի ձևավորումը՝ որպես առանձին արժեք, նոր պահանջներ է առաջադրում ուսուցչի մասնագիտական գործունեության որակին: Սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերությունների զարգացումը անձակողմնորոշված ուսուցման և

դաստիարակության պայմաններում էականորեն բարձրացնում է ուսուցչի այնպիսի անձնային հատկանիշների դերը, ինչպիսիք են՝ խոսքի մշակույթը, վարքի մշակույթը, մանկավարժական գործողությունների մշակույթը, մարդասիրական փոխհարաբերությունների մշակույթը, ինքնատիրապետման, խնդրահարույց իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունները, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցներին տիրապետումը, զսպվածությունը [10]:

Ծրագրի նպատակն է մանկավարժական մասնագիտական պատրաստության ընթացքում ձևավորել ուսանողների հաղորդակցական գործունեության դրդապատճառները և համապատասխան հաղորդակցման մշակույթը, նպաստել ապագա մանկավարժական գործունեության ընթացքում աշակերտների կողմից ուսումնական գործընթացում հաղորդակցական մշակույթի բաղադրիչների յուրացմանը:

Ծրագիրը կնպաստի ուսանողների մասնագիտական և անձնային փորձի հարստացմանը, հաղորդակցման մշակույթի, մասնագիտական և միջանձնային կոմպետենցիաների ձևավորմանը, մանկավարժական գործունեության մշակույթի տարրերի յուրացմանը, մասնագիտական ինքնագիտակցման և աշխարհայացքի կայացմանը, մանկավարժական, հաղորդակցական ներուժի դրսևորմանը, արդյունավետ հաղորդակցման կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

«Ուսուցչի հաղորդակցման մշակույթը» ընտրովի դասընթացը փոխկապակցված է ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության բովանդակության մեջ ընդգրկված այլ ուսումնական առարկաների հետ՝ «Մասնագիտական գործունեության ներածություն», «Մանկավարժություն», «Մանկավարժական հաղորդակցում», «Գործնական մանկավարժություն» և այլն:

Դասընթացի նպատակը - ուսուցչի հաղորդակցման մշակույթի, մասնագիտական և միջանձնային կոմպետենցիաների ձևավորումն ու կատարելագործումն է:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսուցչի հաղորդակցական մշակույթի ձևավորման գործընթացի խթանումը,
- հաղորդակցական, մասնագիտական և միջանձնային կոմպետենցիաների ձևավորումը,

- տնօրինության, գործընկերների, սովորողների, ծնողների հետ հաղորդակցման միջանձնային հարաբերություններում ծագող խնդիրների հաղթահարման կարողությունների ձևավորումը,
- հաղորդակցման մշակույթը որպես ուսուցչի մանկավարժական իմիջի կառուցվածքային բաղադրիչի ինքնազարգացման մեթոդների յուրացումը,
- ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման խթանումը:

Նշված դասընթացի ուսումնասիրությունից հետո ուսանողը կունենա.

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

- սահմանել հաղորդակցման մշակույթի էությունը՝ որպես մանկավարժական գործունեության մշակույթի կարևորագույն բաղադրիչ,
- նկարագրել հաղորդակցման մշակույթի ձևավորման մեթոդները,
- նկարագրել մասնագիտական, հասարակական, բարոյական, համամարդկային արժեքները, միջանձնային և հասարակական ընկալման օրինաչափությունները, ինքնաճանաչման և ինքնատիրապետման միջոցները,
- գիտենալ ուսուցչի հաղորդակցման մշակույթին ներկայացվող համամանկավարժական պահանջները, անհատական մասնագիտական հաղորդակցման մշակույթի ձևավորման ուղիներն ու տեխնոլոգիաները,
- մեկնաբանել աշակերտներին անհատական հաղորդակցման մշակույթի բաղադրիչների կազմավորման ուղիները,
- նկարագրել մանկավարժական կոլեկտիվում բարենպաստ հաղորդակցական միջավայրի ստեղծման հոգեբանական մեխանիզմները:

բ. Գործնական մասնագիտական կարողություններ

- կարողանա ուսումնական և մասնագիտական գործունեության ընթացքում ձևավորել անհատական այլ հատկանիշների վրա հիմնված հաղորդակցման մշակույթ,
- ընտրել կարճ, հստակ, բովանդակալից և վառ արտահայտված մտքեր, գրագետ շարադրել գրավոր և բանավոր խոսքը, արդյունավետ օգտագործել խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևերը, համադրել հաղորդակցման ոճերը, դրսևորել վարքագծի բարձր մշակույթ և մանկավարժական տակտ,

արագ կողմնորոշվել պրոբլեմային իրավիճակներում՝ հիմք ընդունելով հասարակական և մարդկային արժեքները,

- կառուցել սեփական հաղորդակցման արդյունավետ ձևերը, զարգացնել սովորողների հաղորդակցական ներուժը:

գ.Ընդհանրական, փոխանցելի կարողություններ

- տիրապետել հաղորդակցական և միջանձնային կոմպետենցիաներին, հաղորդակցման տեխնոլոգիաներին և մանկավարժական խնդիրների բացահայտման ու լուծման մեթոդիկային, հաղորդակցական ռեֆլեքսիային: Ստեղծագործաբար կիրառել անհատական հաղորդակցման մշակույթի ձևավորման և կատարելագործման միջոցներն ու ձևերը:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

1.Մեկնաբանել ուսուցչի հաղորդակցման մշակույթի, մասնագիտական և միջանձնային կոմպետենցիաների ձևավորման ու կատարելագործման նպատակն ու խնդիրները:

2.Վերլուծել խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևերը, համադրել հաղորդակցման ոճերը: [3]

3.Ստեղծագործաբար կիրառել հաղորդակցման արդյունավետ ձևերը, զարգացնել սովորողների հաղորդակցական ներուժը:

4.Ձևավորել անհատական այլ հատկանիշների վրա հիմնված հաղորդակցման մշակույթ: [2] Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝ դասախոսության տարբեր ձևեր, գննական, գործնական մեթոդներ, թիմային և համագործակցության մեթոդներ:

Գնահատման մեթոդներն ու չափանիշներն են.

1. ընթացիկ ստուգում անհատական աշխատանքի տեսքով,
2. եզրափակիչ քննություն՝ բանավոր՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Յուրաքանչյուր հարցատոմս պարունակում է 3 հարց՝ 30, 30, 40 միավորային արժեքով:

Ներկայացնենք «Ուսուցչի հաղորդակցման մշակույթը» դասընթացի բովանդակությունը, յուրաքանչյուր թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները: Դասընթացը 48 ժամ է՝ դասախոսություն-18, սեմինար-18, գործնական-12:

Ներածություն /2 ժ դասախոսություն/

1. Մանկավարժական հաղորդակցման մշակույթը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր /2 ժ/

Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման հիմնախնդրի արդիականությունը կրթության մարդասիրական հայեցակարգի իրացման պայմաններում: «Հաղորդակցում», «մշակույթ», «հաղորդակցման մշակույթ» հասկացությունների սահմանման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներ: Հաղորդակցման մշակույթը ուսուցչի մասնագիտական գործունեության մեջ: Ուսուցչի հաղորդակցման մշակույթի գործառույթները՝ հաղորդակցական, տեղեկատվական, հուզական, ճանաչողական, դրանց կապը ուսուցման և դաստիարակության գործառույթների հետ:

Թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները – գործնական պարապմունք, հաղորդակցական կարողությունների թեստավորում, «հաղորդակցում», «մշակույթ», «հաղորդակցման մշակույթ» հասկացությունների համեմատական վերլուծություն, պրոբլեմային դասախոսություններ, բանավեճ, ինքնուրույն աշխատանք [7]:

2. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի կառուցվածքը և գործառույթները /6 ժ/

Ուսուցչի հաղորդակցման մշակույթը մանկավարժական գործունեության և մասնագիտական կայացման գործընթացում: Հաղորդակցական ակտիվություն, խոսքի մշակույթ /խոսքային և լեզվական նորմեր/, էթիկական նորմեր, հաղորդակցական նորմեր, հաղորդակցական կոմպետենցիաներ:

Մանկավարժական հաղորդակցման և ուսուցչի հաղորդակցման վերաբերյալ տեսական-մեթոդաբանական մոտեցումները: Ուսուցչի հաղորդակցման մշակույթի բաղադրիչները՝ դրդապատճառային, բովանդակային, գործառնական-տեխնոլոգիական, ռեֆլեքսիվ-հետադարձ կապի ապահովման, նրա ձևավորվածության մակարդակները:

Թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները - դասախոսություններ, սեմինար-շնորհանդեսներ, դերային խաղ-վարժանքներ:

Գործնական պարապմունք, «Հաղորդակցման մշակույթի ձևավորման պլանի նմուշօրինակի մշակում», մանկավարժական խաղեր, խաղային առաջադրանքներ, կազմակերպչական-գործնական խաղեր, մանկավարժական հաղորդակցման մշակույթի ձևավորվածության մակարդակի

որոշման հարցաշարերի մշակում, մանկավարժական իրավիճակների մոդելավորում [7]:

3. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի սոցիալական և հոգեբանական տեսանկյունները

3.1. Ուսուցչի հաղորդակցման մշակույթը որպես մանկավարժական գործունեության մշակույթի ենթահամակարգ /6 ժ/

Հաղորդակցման մշակույթը գործունեության մշակույթի ամբողջականությունը ապահովող բաղադրիչ:

Թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները - դասախոսություն, մոդելավորման տեխնոլոգիաների կիրառում, մանկավարժական հաղորդակցման նախագծում [7]:

3.2. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի հոգեբանական տեսանկյունը /անձի հոգեբանական առանձնահատկությունները և հաղորդակցման օրինաչափությունները /4 ժ/

Անձի նյարդային գործունեության տեսակը, խառնվածքի տեսակները, անձի ակտիվությունը, խառնվածքի բնութագիչների՝ ինտրավերտության և էքստրավերտության աստիճանը, հաղորդակցական ակտիվությունը:

Թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները – պրոբլեմային դասախոսություն, իրավիճակային վերլուծության մեթոդ, սեմինարներ, նախագծային տեխնոլոգիաներ, կլոր սեղաններ, դերային-խաղ վարժանքներ [7]:

4. Ուսուցչի հաղորդակցման մշակույթը

4.1. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման սկզբունքներն ու առանձնահատկությունները /4 ժ/

Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման սկզբունքները և առանձնահատկությունները՝ մասնագիտական հաղորդակցման ֆունկցիոնալությունը, պարունակությունը, նպատակաուղղվածությունը, կառուցվածքային բաղադրիչների բնութագրերը: Խոսքի մշակույթը, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցները: Հասկացություն ուսուցչի հաղորդակցման մշակույթի սկզբունքների և առանձնահատկությունների մասին: Տարրական դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի առանձնահատկությունները:

Թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները - դասախոսություն, մանկավարժական հաղորդակցման նախագծում, մոդելավորում և վերլուծություն, սոցիալական խաղեր-վարժանքներ, հաղորդակցական խաղեր- վարժանքներ, ռեֆլեքսիա և ինքնագնահատում [7]:

4.2. Հաղորդակցման մշակույթը որպես սոցիալ-մշակութային երևույթ, նրա ձևավորման միջոցները /6 ժ/

Հաղորդակցման սոցիալական և մշակութային էությունը, հաղորդակցման ձևերը, հաղորդակցման մշակույթը որպես սոցիալ-մշակութային երևույթ: Նրա ձևավորման միջոցները:

Թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները - համագործակցային կոլեկտիվ ուսումնական աշխատանքի կազմակերպում, համաստեղծագործական աշխատանք, ռեֆերատներ [6]:

4.3. Մանկավարժական հաղորդակցման ոճերը /ժողովրդավարական և ավտորիտար//6 ժ/

Մանկավարժական գործընթացի սուբյեկտների փոխհարաբերությունների տեսակները: Մանկավարժական հաղորդակցման ոճերը, դրանց համեմատական բնութագիրը, կիրառման պայմանները, հաղորդակցման մակարդակները:

Թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները - պրոբլեմային դասախոսություններ, խմբային աշխատանք, մոդելավորում, դերային գործնական խաղեր, մանկավարժական իրավիճակների վերլուծություն, հաղորդակցական վարժություններ, հաղորդակցական ռազմավարությունների մշակում [6]:

5. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիան

5.1. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման փուլերը և մանկավարժական պայմանները /6 ժ/

Հաղորդակցման մշակույթի ձևավորման փուլերի վերաբերյալ գիտելիքների յուրացման փուլ՝ նախապատրաստական, տեսական, գործնական: Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման մանկավարժական պայմանների բնութագիրը: Հաղորդակցական կարողությունների ձևավորման փուլ, հաղորդակցման կոմպլեքտենցիաների ձևավորման փուլ. խոսքի մշակույթի ձևավորման փուլ:

Թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները - դասախոսություններ, գործնական պարապմունք, թրենինգներ, ռեֆլեքսիա (հաղորդակցական ինքնահսկողության զարգացում) նախագծման և մոդելավորման տեխնոլոգիաների կիրառում [7]:

5.2. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի, մասնագիտական և միջանձնային կոմպլեքտենցիաների ձևավորման տեխնոլոգիաները

Ուսուցչի հաղորդակցման մշակույթի, մասնագիտական և միջանձնային կոմպլեքտենցիաների ձևավորման տեխնոլոգիաները,

«տեխնոլոգիա» հասկացության բնութագիրը, դրա կիրառումը հաղորդակցման մշակույթի ձևավորման գործընթացում:

Տեխնոլոգիան մանկավարժական հաղորդակցման կազմակերպման միջանձնային կոմպետենցիաների ձևավորման գործընթացում:

Միջանձնային փոխգործակցության համակարգը: Ուսուցիչ-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող փոխգործակցության տեխնոլոգիան: Ուսուցչի հաղորդակցման, մասնագիտական և միջանձնային կոմպետենտության զարգացումը /6 ժ/:

Թեմայի դասավանդման ձևերն ու մեթոդները - դասախոսություն, սեմինար, հաղորդակցական կարողությունների և հմտությունների ձևավորման վարժանքներ: Հաղորդակցման մշակույթի ձևավորման գործնական խաղերի, սցենարների խմբային և անհատական մշակումներ [7]:

Ներկայացնենք դասընթացի թեմատիկ պլանը.

Բաժինների և թեմաների անվանումը	Տեսական, դասախոսութ.	Սեմինար	Գործնական
Ներածություն 1. Մանկավարժական հաղորդակցման մշակույթը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր	2	2	
2. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի կառուցվածքը և գործառույթները	2	2	2
3. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի սոցիալական և հոգեբանական տեսանկյունները 3.1. Ուսուցչի հաղորդակցման մշակույթը որպես մանկավարժական գործունեության մշակույթի ենթահամակարգ	2	2	2
3.2. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի հոգեբանական տեսանկյունը /անձի հաղորդակցման հոգեբանական առանձնահատկությունները և օրինաչափությունները, ռեֆլեքսիա	2	2	

4.Ուսուցչի հաղորդակցման մշակույթը			
4.1 Հաղորդակցման մշակույթը որպես սոցիալ-մշակութային երևույթ, նրա ձևավորման միջոցները.	2	2	
4.2. Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման սկզբունքներն ու առանձնահատկությունները	2	2	2
4.3.Մանկավարժական հաղորդակցման ոճերը /ժողովրդավարական և ավտորիտար/	2	2	2
5.Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիան			
5.1.Ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման փուլերը և մանկավարժական պայմանները	2	2	2
5.2.Ուսուցչի հաղորդակցման մշակույթի, մասնագիտական և միջանձնային կոմպետենցիաների ձևավորման տեխնոլոգիաները	2	2	2
Ընդամենը	18	18	12

Դասընթացին անհրաժեշտ հիմնական գրականության ցանկը ներկայացված է հոդվածի վերջում:

Այսպիսով, մանկավարժական հաղորդակցման մշակույթի և միջանձնային կոմպետենցիաների ձևավորումը մանկավարժական բուհերում մասնագիտական պատրաստության կարևորագույն խնդիրներից մեկն է, ուստի այդ գործընթացի արդյունավետությունը ենթադրում է ուսուցման ժամանակակից մոտեցումների և նորագույն տեխնոլոգիաների կիրառում: Սովորողների հաղորդակցման մշակույթի, մասնագիտական և միջանձնային կոմպետենցիաների ձևավորման գործընթացը առավել արդյունավետ դարձնելու նպատակով մշակված «Ուսուցչի հաղորդակցման մշակույթը» ընտրովի դասընթացի ծրագիրը, տարրական դպրոցի ապագա ուսուցչի հաղորդակցման մշակույթի ձևավորման տեխնոլոգիաները, դասերի ձևերը մեր կարծիքով կապահովեն ուսուցչի մանկավարժական գործունեության յուրահատկությունը, արվեստը, կոմպետենտությունը և որակը: Մանկավարժական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ուսուցչի մանկավարժական հաղորդակցման մշակույթի ձևավորվածության մակարդակով: Ապագա դասվարի

հաղորդակցման մշակույթի, մասնագիտական և միջանձնային կոմպետենցիաների ձևավորումը՝ որպես գործընթաց, ենթադրում է հաղորդակցման միջոցների, ձևերի, սկզբունքների, մեթոդների տեխնոլոգիաների կիրառում:

**ФОРМИРОВАНИЕ КУЛЬТУРЫ ОБЩЕНИЯ И МЕЖЛИЧНОСТНЫХ
КОМПЕТЕНЦИЙ БУДУЩЕГО УЧИТЕЛЯ В РАМКАХ КУРСА
«КУЛЬТУРА ОБЩЕНИЯ ПЕДАГОГА»**

Микаелян Л. А.

В статье представлены роль учебного курса "Культура общения учителей", программы, методы преподавания, технологии, средства формирования культуры общения и межличностных компетенций будущего учителя.

Ключевые слова: культура общения, коммуникативные умения, формирование межличностных компетенций, педагогика, содержание курса, учебная программа, цель, задача, методы.

**THE FORMATION OF THE ELEMENTARY SCHOOL TEACHERS'
COMMUNICATION CULTURE AND INTERPERSONAL COMPETENCES
VIA THE COURSE "TEACHERS' COMMUNICATION CULTURE"**

Mikaelyan L. A.

The article presents the role of the course "Teachers' Communication Culture" in the formation of the elementary school teachers' professional and interpersonal competences, the course programme, the methodology of teaching the themes, the means and technologies.

Keywords: communication culture, communication abilities, formation of interpersonal competences, pedagogy, the content of the course, educational programme, aim, task, methods.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. Գ., Արնատրյան Ա., Օհանովա Ի և ուրիշներ Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման համար: Երևան: «Նոյյան Տապան»: «Այոնքս»: 2004: 176 էջ:

2. Ալեքսանյան Ա. Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում: Երևան: ԵՊՀ հրատ.: 2015: 264 էջ:
3. Բայյան Ա. Ա. Մանկավարժական վարպետություն, հիմունքներ: Եր.: «Լույս»: 1988: 176 էջ:
4. Բուդաղյան Ս. Ս., Կարաբեկյան Ս. Բ. Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց-Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն. –Եր.: «Թասկ» ՍՊԸ: 2010: 110 էջ:
5. Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դավթյան Ս. Մանկավարժական հաղորդակցում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր.: Հեղ. Հրատ: 2010: 202 էջ:
6. Պետրոսյան Հ. Հ. Մանկավարժության ժամանակակից տեխնոլոգիաներ: Մոդուլային ուսուցման ձեռնարկ: Եր.: Հեղ. հրատ.: 2012: 564 էջ:
7. Кукушкин В. С. Современные педагогические технологии. Начальная школа. Пособие для учителя. “Ученик с увеличением”, Ростов н/Д: изд.-во “Феникс”. 2002. 384 с.
8. Панфилова А. П. Теория и практика общения. Учебное пособие. М.”Академия”. 2007. 288 с.
9. Хуторский А. В. Ключевые компетенции как компонент личностно ориентированной парадигмы образования//Народное образование. 2003. N 2. С. 58-64.
10. Шадриков В. Д. Базовые компетенции педагогической деятельности. //Сибирский учитель. 2007. N 6. С. 5-15.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Միքսելյան Լ. Ա.- մանկավարժական գիտությունների թեկնածու
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ lusinemiq@mail.ru*

Տրվել է խմբագրություն 18.10.2019